Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

Լ.Կիրակոսյան

ԵՊՀ

Մշակութային եղեռն (Արցախի ճարտարապետական հուշարձանների օրինակով)

Հայոց ցեղասպանության մասին խոսելիս ակամա մտաբերում ենք միայն ավելի քան մեկ ու կես միլիոն, անմեղ զոհերի անմարդկային սպանդը, տեղահանությունն ու կոտորածները: Շատ ավելի քիչ ենք խորհում մշակութային մեր կորստի մասին՝ թե ցեղասպանության հետևանքով ինչպիսի հոգևոր գանձեր, արժեքներ, կոթողներ կորցրեցինք: Որպես մշակութային ցեղասպանություն է որակվում հայկական հուշարձանների հետ կատարվածը միջազգային բոլոր ատյանների սահմանումներով (Israel W. Charny, 1999, p.9): Այդ մշակութային եղեռն ամենուր էր՝ մեր պատմական հայրենիքի բոլոր բռնազավթված տարածքներում՝ Արևմտյան Հայաստանում, Խորհրդային Ադրբեջանում և Վրաստանում: Հայաստանին հարևան երկրներից միայն Իրանն է, որ ոչ միայն պահպանում է հայկական հուշարձանները, այլև՝ վերանորոգում: Սրան հակառակ, մինչև վերջերս Հայաստանից կտրված և Ադրբեջանին բռնակցված Արցախում ճարտարապետական հուշարձանները ավերվում, <<խոշտանգվում>> և այլափոխվում էին: Հայկական մշակութային արժեքների կանխամտածված և հետևողական ոչնչացումն Ադրբեջանի կողմից լիովին համապատասխանում է <<էթնոցիդ>> կամ ցեղասպանություն բնորոշմանը (Պարսամյան Ս., 2010, էջ 160-161): Արցախի և նրա ճարտարապետության մեկուսացումը ադրբեջանական իշխանությունների կողմից հետապնդում էր հեռահար նպատակներ՝ հիմք ստեղծել հասնելու իրենց առաջադրած գերխնդրին՝ Լեռնային Ղարաբաղի տարածքը իրենց հայրենիքը <<հանդիսացող>> Աղվանքին վերագրելը և հայ ժողովրդի արցախյան հատվածի Աղվանքին վերաբերելն ու հայ ժողովրդի այդտեղ ստեղծած նյութական մշակույթի հուշարձաններն աղվանական (ադրբեջանական) համարելու վարկածը: Ադրբեջանական պատմագիտությունը այդ մտադրություններն իրագործելու համար ոչ մի բանի առաջ կանգ չի առնում՝ ընդհուպ մինչև Լեռնային Ղարաբաղի, Սյունիքի, Նախիջևանի մարզերի և նրանց մշակույթի հուշարձանների <<աղվանացում>>, <<թուրքացում>>՝ կապելով վերջիններս Ադրբեջանի <<կրակի տաճարների>> հետ, բարբարոսաբար ավերելով, կեղծելով և ոչնչացնելով հայ ժողովրդի արցախյան հատվածի նյութական արժեքները:

Հակահայկական գործողությունները համակարգված են և ընթանում են միասնական ճակատով՝ <<ադմինիստրատիվ-կազմակերպչական>> մակարդակով (Պետրոսյան Հ., 2010, էջ 142): Այս գործում ներգրավված են ոչ միայն քաղաքագետները, այլև պատմաբանները, ճարտարապետները, հնագետները, ազգագրագետները, լեզվաբանները: Նրանք օգտագործելով բոլոր թույլատրելի և անթույլատրելի միջոցները ձգտում են Ադրբեջանի զբաղեցրած տարածքը ադրբեջանցիների հետ կապող արմատներ գտնել և մաքրել այն հայերից, հայկական մշակութային ժառանգությունից: Արցախի քրիստոնեական եկեղեցիները, վանքերը, ճարտարապետական մյուս կառույցները ոչնչացնելու քաղաքականությունը խթանվում էր պետական բարձր մակարդակով՝ ադրբեջանական իշխանությունները կոչ էին անում ոչնչացնել քրիստոնեական պաշտամունքի կառույցները, որովհետև դրանց <<բազմազանության առկայությունը ցույց է տալիս, թե որքան շատ է կաշկանդված եղել Ղարաբաղի բնակչությունը կրոնական կապանքներում>>, որից <<ազատագրվել է շնորհիվ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի>> (Մկրտչյան Շ., 2003, էջ 196):

Ադրբեջանական ԽՍՀ տարածքում հայ մշակույթի հուշարձանները բացարձակ մեծամասնություն էին կազմում՝ հասնելով շուրջ 11 հազարի՝ միայն Լեռնային Ղարաբաղում՝ 1700: Սակայն այլ պատկեր էր արձանագրվում պաշտոնական փաստաթղթերում: Պետական պահպանության տակ գտնվող պատմության և մշակույթի 1968թ. հաստատված ցուցակում 591 հուշարձանների թվում միայն 25 հայկական հուշարձան կա, որից միայն 7-ը՝ Լեռնային Ղարաբաղի տարածքում: 1968թ. ապրիլի 2-ի թիվ 140 և 1988թ. ապրիլի 27-ի թիվ 145՝ թվում է թե ոչ պատահաբար ապրիլին, կայացված որոշումներով հաստատված են Ադրբեջանի տարածքի պետության կողմից հաստատված հուշարձանները, որոնց թվում նույնիսկ Գանձասարի վանքի համալիրը չկա: Հատկապես վերջին տասնամյակներում Արցախի ճարտարապետության հուշարձանները դարձել են ադրբեջանցի պատմաբանների հիվանդոտ շահագրգռության առարկան: Հակառակ պատմական աղբյուրներին, վիմական տեղեկություններին, ճարտարապետական և կառուցվածքային առանձնահատկություններին, Արցախի վանքերն ու եկեղեցիները դրանց պատկերաքանդակներն ու որմնանկարները հայտարարվում են աղվանական-ադրբեջանական, ձգտելով դրանք օտարել հայ մշակույթից: Հակագիտական այդ տեսակետերին հայ գիտնականները ադրբեջանական պատմագիտության վերլուծության հիման վրա փորձում են վեր հանել նրանում Արցախի մշակույթի քննության տեսական ու քաղաքական հիմքերը, ցույց տալ ադրբեջանցի պատմաբանների Ղարաբաղում թուրքական էթնոսի բնիկ լինելու և հայերի

եկվորության մասին հայեցակարգի սնանկությունը, հետևաբար, արցախահայության մշակութային, մասնավորապես ճարտարապետական ժառանգության յուրացման փորձերի անհիմն լինելը (Սաֆարյան Վ., 2007, էջ 206): Արցախում առանձնացվում է հատուկ ճարտարապետական դպրոց: <<Արցախի ճարտարապետական դպրոց>> հասկացությունը առաջինը գիտական շրջանառության մեջ դրել է Պաուլո Կունեոն (Cuneo P., 1978, p. 9), արցախի հուշարձանների ուսումնասիրության հիմքը՝ Ա. Յակոբսոնը՝ Գանձասարի վանքի հանգամանալից ուսումնասիրությամբ (Якобсон А., 1960): Հետագայում արդեն Մ. Հասրաթյանը (Հասրաթյան Մ., 1992), Շ.Մկրտչյանը (Մկրտչյան Շ., 1985), Վ. Հարությունյանը (Հարությունյան Վ., 2003), Ա.Ղուլյանը (Ղուլյան Ա., 2001), Ս.Կարապետյանը (Կարապետյան Ս., 1999), Ժ. Մ. Թիերին, Պ.Տոնապետյանը (Tierry J.M., Donabedian P., 1987) և այլոք իրենց աշխատություններում բացահայտեցին Արցախի ճարտարապետության ողջ հարստությունը, առանձնահատկությունները՝ որպես հայ միջնադարյան ճարտարապետության առանձին դպրոցի, նաև բարձիթողի, ավերակված, նաև խաթարված վիճակը:

Բնականաբար այսպիսի իրավիճակում, արցախյան շարժումից առաջ հայագիտությունը զրկված էր Լեռնային Ղարաբաղում համապարփակ հետազոտություններ կատարելու հնարավորությունից: Այսօր, արդեն, ազատագրված տարածքներում լիակատար հիմքեր կան Արցախի հին ու միջնադարյան մշակույթի ուսումնասիրության ու պահպանության համար: Այդ աշխատանքներն սկսվել են, կարելի է ասել, եթե ոչ ռազմական գործողություններին զուգահեռ, ապա տարածքների անմիջապես ազատագրումից հետո: Վերջին տարիներին այստեղ կատարված հետազոտությունների արդյունքում ոչ միայն համալրվել է հայկական պատմաճարտարապետական ժառանգությունը, այլև ճարտարապետական հուշարձանների փաստական տվյալների և ճարտարապետական գիտության ընձեռումների հիման վրա շատ համալիրներ ներկայանում են նոր մեկնաբանությամբ և հնարավոր է դարձել նաև անմիջականորեն տիրապետել այն իրավիճակին, որ խորհրդային տարիներին հաստատվել էր այստեղ (Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2005-2011թթ., 2011թ.):

Այս տարածաշրջանի հայկական հոգևոր և մշակութային արժեքների նկատմամբ վանդալիզմի և բարբարոսական դրսևորումների շատ օրինակներ են վավերացված ինչպես առանձին հետազոտողների աշխատություններում (Կարապետյան Ս., 1999), այնպես էլ 1990թթ. հայկական մամուլի հրապարակումներում, որոնցից մեկում կարդում ենք, որ կատարվեց <<գերեզմանների պատերազմ>>, <<քարե պատերազմ>>՝ ուղղված

պատմական հիշողության դեմ: Այդ բոլորի հիմքում ադրբեջանական կողմը տեսնում էր մի հիմնական խնդիր՝ որ Քուր-Արաքսյան միջագետքը պատկանել է ոչ թե Հայաստանին, այլ՝ Կովկասյան Աղվանքին, որ սահմանաբաժանը Հայաստանի և Կովկասյան Աղվանքի միջև եղել է ոչ թե Քուր գետը, այլ՝ Արաքսը: Միանգամայն պարզ է դառնում այն մեխանիզմը, որ ադրբեջանցիները ստեղծել են. Կովկասյան Աղվանքը զբաղեցնում էր նաև Քրի աջափնյա տարածքը, որը հայերի հետ կապ չունի և որտեղ չեն կարող լինել հայկական հուշարձաններ և որ նրա ողջ տարածքի հուշարձանները աղվանների ստեղծածն են: Այդ տրամաբանությամբ էլ Ադրբեջանի տարածքի պատմության հուշարձանների թվում (պետական-պաշտոնական գրանցումներում, տուրիստական ուղեցույցներում, ուսումնական ձեռնարկներում, հետազոտական աշխատություններում) չեն հիշատակվում տեղիս հայկական հուշարձանները: Մինչդեռ այդ հուշարձանները վավերացվել են նաև այլազգի հետազոտողների մոտ: Ռուս հնագետ Ե.Պչյոլինան իր աշխատությունում Քարվաճառի շրջանի հայկական հուշարձանների ու բնակավայրերի մասին գրում է. <<Բազմաթիվ բնակելի քարայրեր, գյուղերի ավերակներ, բերդապարիսպներ, մատուռներ ու եկեղեցիներ խոսում են երբեմնի կյանքի մասին՝ ներկայիս համարյա մարդազուրկ հեռաստաններում: Ցավոք, գերակշող մեծամասնությամբ այդ բոլոր հուշարձանները ոչ միայն չեն հետազոտված, այլև անգամ չեն հիշատակված գրականության մեջ, թեկուզ հաշվառման կարգով: Այստեղ հոծ զանգվածներով ամենուր ապրող հայերից մնացել են լայնատարած գերեզմանոցներ, որ սփռված են թե կիսավեր եկեղեցիների շուրջ, թե առանձին>> (Ленинград, 1940, стр. 243): Ահա թե ինչու խոհեմ ու շատ զգույշ պետք է լինեն հայ ուսումնասիրողները <<Կովկասյան Աղվանք>> եզրն օգտագործելիս, քանզի այն, ադրբեջանցիների կողմից օգտագործվում և շահարկվում է՝ իրական հիմք չունենալով: Այսպիսի ներկայացում ենք տեսնում ճարտարապետ Արմեն Ղազարյանի մոտ, ով Վանքասարի եկեղեցու մասին գրում է. <<Պատմական տեղագրությունը. Կովկասյան Ալբանիա (Աղվանք), Արցախ, Վանքասար լեռ՝ Խաչենագետի աջ ափին>> (Казарян А., Том III, 2012, էջ 601):

Վանդալիզմը արցախահայության հոգևոր և մշակութային արժեքների հանդեպ միայն քարոզչական ճանապարհով չի ընթացել: Սկսած 1970-ական թվականներից ադրբեջանցիները բռնել են ամեն գնով հայկական ճարտարապետական ժառանգության անմիջական յուրացման և ոչնչացման ճանապարհը: Այդ գործողությունների հետևանքով, ինչպես ահազանգում էին մասնագետները, <<հողօգտագործման նպատակով բուլդոզերներով ավերվել և հողին են հավասարեցվել 13 պատմահնագիտական հուշարձաններ: Պայթուցիկ նյութեր են օգտագործվել Մեծ

Թաղլարի Ծծախաչ և Ազոխի քարանձավներում, Ամարասի և Կաղանկատույքի բնակավայրերի տարածքներում: Փորումներ են կատարվել Գրիգորիսի դամբարանում (Ամարասի վանքում)>>, երկրաբանական հետազոտություններ կատարելու պատրվակով հորանցքներ են փորված Դադիվանքի հուշարձանների տակ...12-13-րդ դարերի երկու կամուրջ, 13-17-րդ դարերի 3 մատուռ, շուրջ 70 խաչքար, դամբարաններ՝ առանց օրենքի արձանագրելու զոհ են դարձել Սարսանգի ջրամբարի կառուցմանը՝ քարերն օգտագործելով պատվարի մեջ կամ թողնելով ջրամբարի հատակում>> (Հարությունյան Վ., 2003, էջ 119-110): Հայկական վանքերի ու եկեղեցիների սրբատաշ քարերն օգտագործվել են նաև գյուղական տների և այլ շինությունների կառուցման ժամանակ: 1950-ականներին քանդված, Գետամիջո Սբ. Աստվածածին վանքի շուրջը գոյացել էր Վանք գյուղը, որի քարերը հանդիպում են այդ գյուղի տների, նույնիսկ գոմերի պատերի մեջ: Վանքի շատ քարեր էլ հանդիպում են վերոնշյալ թվականներին Չրաղ, որը Ճրագի աղավաղված տարբերակն է, գյուղի դարձյալ դպրոցի պատերի շարվածքում (Կարապետյան Ս., 1999, էջ 69):

Հուշարձանի ոչնչացման և որպես շինաքարի օգտագործման օրինակ է նաև Տաք ջուր (Իստիսու) առողջարանի շրջակայքի հայկական միջնադարյան եկեղեցիների քարերով կառուցված կառավարական առողջարանը (Մկրտչյան Շ., 2003, էջ 207):

Ադրբեջանցիների կողմից հուշարձանների ինքնության ոչնչացման քաղաքականություն էր նաև <<նորոգման>> կազմակերպումը: Այդպիսի վերանորոգման աշխատանքների զոհ է դարձել Գանձակ քաղաքի Սբ.Սարգիս եկեղեցին, որը երեսապատվել է աղյուսով՝ կորցնելով հայկական ճարտարապետական ոճը և օգտագործվել որպես ժողովուրդների բարեկամության պալատ (Կարապետյան Ս.,2002, էջ 11):

Հուշարձանների ավերումը մեծ մասշտաբների հասավ արցախյան պատերազմի ժամանակ, երբ առիթն օգտագործվելով, եկեղեցիներն ու վանքերը կանխամտածված պայթեցման, հրետանակոծության ու ռմբակոծության էին ենթարկվում: Արդյունքում Գետաշենի մոտ գտնվող Եղնասարի կանգուն վանքը վերածվեց ավերակների: Գնդակոծվել են Գանձասարի, Ամարասի, Դադիվանքի տաճարները, Տող գյուղի եկեղեցին և այլ հուշարձաններ: Շուշիի Սբ. Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին այդ տարիներին երեք անգամ հրդեհվել է:

Նկ.1. Շուշիի Սբ. Ամենափրկիչ եկեղեցին՝ ազատագրումից և վերականգնումից հետո (լուսանկարը՝ Հ. Բազեի):

1991թ. Շուշիի Մեղրեցոց եկեղեցին վերածվել է ամառային կինոթատրոնի, Կանաչ ժամը՝ հանքային ջրերի սրահի, որի հետևանքով եկեղեցու կառույցն էլ է վտանգվել (Մելիք-Շահնազարյան Լ., 1998, էջ 149-150): 1990թ. մայիսի 20-ի համարում <<Սովետական Ղարաբաղ>> թերթը գրում էր. <<Ադրբեջանական զինված բանդայական ձևավորումները չեն դադարեցնում գազանությունները Ամարասի հովտում: Այստեղ տեղափոխված տնտեսական կառույցների ավերելուց և թալանելուց հետո մայիսի 18-19-ին նրանց գազանությունների օբյեկտը դարձավ Ամարասի վանքը: Իրենց հետ բերելով ավերման անհրաժեշտ ողջ տեխնիկան, հանցագործները ջարդեցին վանքի դռները և պատուհանները, գողացան կահույքը, հափշտակեցին վանքի գանձարանը>>:

Ազատագրված տարածքներում և մասնավորապես, Քարվաճառում և Մարտակերտում հետախուզական շրջայցերի և հնագիտական պեղումների ընթացքում, մենք ևս հանդիպել ենք հուշարձանների ֆիզիկական և այլ եղանակներով ոչնչացման դեպքերի: Ծար պատմական բնակավայրում, որը Խորհրդային Ադրբեջանի կազմում արդեն հանդես էր գալիս հնչյունափոխված Զառ ձևով, 1950-ականներին կառուցվել են մի քանի բնակելի տներ և գյուղի դպրոցը, որի պատերում, որպես շինաքար օգտագործվել են նաև արձանագրակիր քարերի, խաչքարերի, տապանաքարերի բեկորներ:

Նկ.2. Ծար. Խորհրդային շրջանում կառուցված դպրոցի պատերի մեջ որպես շինաքար օգտագործված ջարդոտված խաչքարերի և արձանագրակիր քարերի բեկորներ (լուսանկարը՝ Հ. Պետրոսյանի):

Մեկ այլ՝ Եղեգնուտ գյուղում տան պատի շարքում որպես շինաքար էր օգտագործվել խաչային հորինվածքով քարը: Հանդաբերդի վանքում պայթեցվել էր գավիթը, որի հետևանքով ծածկի զգալի մասը ավերվել և թափվել էր ներսում: Կանգուն շինությունների մեծ մասն էլ շատ անմխիթար վիճակում էր: Տեղահանվել և նաև ձորն էին գլորվել վանքի շուրջը գտնվող միջնադարյան գերեզմանոցի շատ տապանաքարեր և խաչքարեր: Արցախի ազատագրումից հետո հնարավոր դարձան վանքի պեղումները և շրջակայքի հետազոտությունը (Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., 2009, էջ 30-47): Երկամյա պեղումների արդյունքում ամբողջովին մաքրվեց, ամրակայվեց և մասնակի վերականգնվեց Հանդաբերդի վանքը (Կիրակոսյան Լ., 2010, էջ 127):

Նկ.3. Հանդաբերդի վանքի շինությունների հիմնական խումբը պեղումներից առաջ և

վերականգնման նախագիծը, տեսքը՝ հարավից, (լուսանկարը՝ Հ.Պետրոսյանի, նախագիծը՝ Լ.Կիրակոսյանի):

Չարեքտարի վանքի, որը գտնվում է Արցախի Վերին Խաչեն գավառում՝ (այժմ՝ ԼՂՀ Մարտակերտի շրջան, գյուղ Չարեքտար) կառույցները ձևափոխվել էին և տասնամյակներ շարունակ օգտագործվել որպես անասնագոմեր: Այսօր այստեղ նույնպես պեղման և հետազոտական աշխատանքներ են իրականացվել և վանքը ներկայանում է քայքայված, բայց նախնական կազմով (երեք եկեղեցիներ, գավիթ, սրան հարավից կից սրահ, գավթին հյուսիսից կցված զույգ աշտարակներով պարիսպ) (Այվազյան Ս., Սարգսյան Գ., 2011, էջ 48-58):

Նկ.4. Չարեքտարի վանքի ընդհանուր տեսքը և գոմի վերածված եկեղեցու ներքնատեսքը ադրբեջանական օգտագործման ժամանակ (լուսանկարը՝ Հ. Պետրոսյանի):

Իհարկե, պետք է նշել նաև, որ խորհրդային շրջանում՝ աթեիստական քարոզչության պայմաններում ոչ միայն ադրբեջանցիները, այլև հայերն էին եկեղեցիները վերածում եթե ոչ գոմի, ապա պահեստի, լավագույն դեպքում՝ ակումբի:

Մշակութային յուրօրինակ վանդալիզմի դրսևորում էին նաև պատմաճարտարապետական հուշարձանների վերականգնման և պահպանության անվան տակ իրականացված աշխատանքները, որոնց արդյունքում վանքերի ու եկեղեցիների ճարտարապետությունը այլափոխվում էր: Այսպիսի ճակատագրի է արժանացել Վանքասարի՝ 7-րդ դարի եկեղեցին, որը գտնվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանում, Ստեփանակերտից Մարտակերտ տանող մայրուղու ձախ կողմում, Վանքասար կոչվող գագաթներից ամենաբարձրի վրա: Միջնադարյան գողտրիկ կառույցը թեև կանգուն է մնացել, բայց կորցրել է իր դիմագիծը՝ ճարտարապետական ոճը, պատկանելությունը: Մեր կողմից կատարված Վանքասարի

եկեղեցու տեղազննումներն ու մանրամասն չափագրությունները նպաստել են կառույցի հատակագծային և ծավալատարածական հորինվածքի ամբողջական և իրական պատկերի ներկայացմանը և թույլ տվել հասկանալ ադրբեջանական <<վերականգնման>> էությունը, որն իրականացվել է անցյալ դարի 80-ականներին: Նախնական հատակագծի վրա վերականգնվել է մի ծավալ, որը չի համապատասխանում նախնական կառույցին: Այդ <<նորոգումներից>> եկեղեցու ծավալատարածական հորինվածքն ու համաչափական համակարգը խաթարվել են և աղճատվել է նրա նախնական հորինվածքը: Վանքասարի եկեղեցու ոճական և շինարարական առանձնահատկությունների հետ առնչվող վաղմիջնադարյան բոլոր հուշարձանները կառուցված են այլ կերպ: Այսպիսի ձևով վերականգնումը ոչ թե չիմացություն, այլ դիտավորություն է հետապնդել: Ադրբեջանական՝ քաղաքական նպատակներ հետապնդող <<հեռատես ձեռնարկը>> լուրջ բարդություններ է առաջացրել հուշարձանի նախնական տեսքի վերականգնման համար:

Սակայն փաստական կռվանների, համեմատական (մասնավորապես Քարաշամբի, Այլաբերի, Թալինի ս. Աստվածածին եռախորան եկեղեցիներ) վերլուծության, տարածաշրջանի վաղմիջնադարյան հարուստ մշակութային շերտի և ճարտարապետական համալիրների համադրության արդյունքում, հնարավոր և անհրաժեշտ է ներկայացնել պատմության իրատեսական պատկերը, աղվանական - ադրբեջանական կապի և ընդհանրության <<տեսության>> և հայ ժողովրդի արցախյան հատվածի ստեղծած նյութական մշակույթի հուշարձանները աղվանական համարելու վարկածի ողջ սնանկությունը և հետազոտությունների միջոցով ադրբեջանական հարձակումներին հակահարված տալ: Արդյունքում ներկայացնում ենք Վանքասարի վերակազմության նախագիծը՝ առաջարկելով այն նաև վերակառուցել (Կիրակոսյան Լ., 2012, էջ 184-186):



Նկ.5. Վանքասարի եկեղեցին <<ադրբեջանական վերանորոգման>> ընթացքում, վերանորոգումից հետո (լուսանկարը՝ Հ. Բազեի) և վերակազմությունը (Լ.Կիրակոսյան):

Վանքասարի եկեղեցին տուժել էր նաև արցախյան պատերազմից: Արևմտյան ճակատում՝ բարավորից վերև արկը բավական մեծ խոռոչ էր բացել, որը սպառնում էր պատի կայունությանը: 2011թ. աշնանը ԼՂՀ Զբոսաշրջության վարչությունը մաքրման, ամրակայման և բարեկարգման աշխատանքներ է իրականացրել այստեղ: Մասնակի ամրակայման աշխատանքներն ավարտվել են 2012թ. հունվարին և եկեղեցու գմբեթին

տեղադրվել է խաչը: Վերաշարվել է արևմտյան ճակատի քանդված մասը: Բացվածքներում տեղադրվել են մետաղական դռներ, ներսում կառուցվել է բեմը: Կարծում ենք, սակայն, որ այսպիսի աղավաղված ծավալի վրա հավելումներ անելը ավելորդ միջոցառում էր: Անհրաժեշտ է վերականգնել կառույցի նախնական կերպարը, առավել ևս կատարված նորոգումները նույնպես զերծ չեն սխալներից (արևելյան խորանում անմասշտաբ և անհամաչափ բեմի կառուցում, մուտքերում մետաղական դռների տեղադրում, արկից վնասված արևմտյան ճակատի խոռոչի վերաշարում՝ միջնադարյան շարվածքին անհարիր եղանակով): Ցավով պիտի նշենք, որ այլ տեղերում նույնպես հանդիպում ենք անթույլատրելի դրսևորումների՝ երեսապատվում է Գանձասարի վանքի պարիսպը, Ասկերանի շրջանի Ավետարանոց (Չանաղչի) գյուղում՝ Արցախյան ազատամարտում նահատակված քաջորդիների հիշատակին նվիրված հուշակոթողը կանգնեցվում է վանքի միջնադարյան պարսպի վրա՝ խաթարելով մշակութային լանդշաֆտը:

Ներկայացված Ճարտարապետական հուշարձանները միայն փոքր մասն են կազմում այն ծանրակշիռ ժառանգության, որոնց նկատմամբ ադրբեջանցիների կողմից իրականացվել է մշակութային եղեռն:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ ադրբեջանական իշխանությունների վարած քաղաքականությունը քրիստոնեական հայ ճարտարապետական հուշարձանների հանդեպ հիմնականում տարվում էր մի քանի ուղղություններով.

- Դրանց մասին պաշտոնական հրատարակություններում, տեղեկատուներում, ուղեցույցներում, լռության պահպանում,
- էթնոմշակութային և կրոնական պատկանելության խեղաթյուրում,
- հուշարձանների կանխամտածված ավերում և այլափոխում,
- հուշարձանների նկատմամբ զանազան բարբարոս գործողությունների (պայթեցումներ, շինությունների ավերում, հրդեհում և որպես շինաքարի օգտագործում, եկեղեցիների վերածումը գոմերի, ախոռների, պահեստների և այլ նշանակության շինությունների) իրականացում,
- հայկական եկեղեցիները մահմեդական կառույցների վերափոխում,
- հայկական շատ հուշարձանների հողով ծածկում և քողարկում,
- այցելությունների և ուսումնասիրությունների արգելում,

- վերականգնման և պահպանության քողի ներքո հուշարձանների ծավալատարածական հորինվածքի, կերպարի և ինքնության ճարտարապետական այլափոխում :

Նկարների ցանկ

Նկ.1. Շուշիի Սբ. Ամենափրկիչ եկեղեցին՝ ազատագրումից և վերականգնումից հետո:

Նկ.2. Ծար. Խորհրդային շրջանում կառուցված դպրոցի պատերի մեջ որպես շինաքար օգտագործված ջարդոտված խաչքարերի և արձանագրակիր քարերի բեկորներ:

Նկ.3. Հանդաբերդի վանքի շինությունների հիմնական խումբը պեղումներից առաջ և վերականգնման նախագիծը, տեսքը՝ հարավից:

Նկ.4. Չարեքտարի վանքի ընդհանուր տեսքը և գոմի վերածված եկեղեցու ներքնատեսքը ադրբեջանական օգտագործման ժամանակ:

Նկ.5. Վանքասարի եկեղեցին <<ադրբեջանական վերանորոգման>> ընթացքում, վերանորոգումից հետո և վերակազմությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ուսումնասիրություններ

1.1. Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, ՀՀ ԳԱ <<Գիտություն>> հրատ., 1999, 247 էջ:

1.2. Հասրաթյան Մ., Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Հայաստանի ԳԱ, Երևան,1992, 118 էջ:

1.3. Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2005-2011թթ., ԼՂՀ ԿԱ զբոսաշրջության վարչություն, Ստեփանակերտ, 2011, 143 էջ:

1.4. Ղուլյան Ա., Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները, Երևան, ՀՀ ԳԱ <<Գիտություն>> հրատ., 2001, 183 էջ:

1.5. Մելիք-Շահնազարյան Լ., Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության նկատմամբ, Երևան, 1998, 160 էջ:

1.6. Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, <<Հայաստան>> հրատ.,1985, 354 էջ:

1.6. Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջանի իրականացրած ցեղասպանության անատոմիան, Սեփանակերտ, <<Ազատ Արցախ>>, 2003, 238 էջ:

1.8. Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., Հանդաբերդի վանքը և նրա պեղումները, Երևան, ՀՀ ԳԱ <<Գիտություն>> հրատ., 2009, 105 էջ:

1.9. Казарян А., Церковная архитектура стран Закавказья VII в., Ванкасар, церковь, 70-80-е гг.VIIв., Том III, М., Locus Standi, 2012, стр. 601-605.

1.10. Пчелина Е., Армянские памятники на территории Азербайджанской ССР, Ленинград, 1940, стр.92-243.

1.11. Якобсон А., Гандзасар, Ереван, 1987.

1.12. Cuneo P., Le scuole regipnali nell architectura Armena, Attu del Primo Simposio.-Internazionale di Arte Armena-1975, Venezia, 1978.

1.13. Israel W. Charny, Classification og Genocide in Multipe Categories <<Encyclopedia og Genocide>>, vol 1, Santa Barbara, California, 1999.

1.14. Tierry J.M., Donabedian P., Les arts armeniens, Paris, 1987.

2. ժողովածուներ

2.1. Այվազյան Ս., Սարգսյան Գ., Չարեքտարի վանական համալիրի պեղումների և հետազոտությունների արդյունքները, Վարձք, թիվ 4, Երևան, մայիս-հոկտեմբեր, 2011, էջ 48-58:

2.2. Կիրակոսյան Լ., Հանդաբերդի վանքի վերականգնման հայեցակարգը, Հայագիտական հանդես, թիվ 1, Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատ., 2010, էջ 124-138:

2.3. Կիրակոսյան Լ., Վանքասարի եկեղեցու ճարտարապետությունը և ադրբեջանական <<վերականգնումը>>, Հայկական լեռնաշխարհի պատմաճարտարապետական ժառանգությունը, Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջ 184-186:

2.4. Հարությունյան Վ., Դարը մեր մեջ, մենք՝ դարի, Երևան, Դար, 2003, 277 էջ:

2.5. Պարսամյան Ս., Ադրբեջանի կողմից իրագործված հայկական հուշարձանների ոչնչացումը՝ որպես մշակութային ցեղասպանություն, Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական ձգտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ, Կաճառ, 4 (47-58), <<Կաճառ>> գիտական կենտրոնի հրատարակչություն, Շուշի, 2010, էջ 160-169:

2.6. Պետրոսյան Հ., Մշակութային էթնոցիդն Արցախում (Մշակութային ժառանգության բռնայուրացման մեխանիզմը), Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական ձգտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ, Կաճառ, 4 (47-58), <<Կաճառ>> գիտական կենտրոնի հրատարակչություն, Շուշի, 2010, էջ 137-149:

2.7. Сафарян В., К вопросу о методике присвоения истории и культуры Арцаха в современной азербайджанской историографии, /Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անցյալը, ներկան ու ապագան: Միջազգային գիտաժողով, Երևան, 2007, էջ 195-207:

2.8. Якобсон А., Гандзасарский моностырь, Исседования по истории культуры народов Востока, (Сборник в честь академика И.О. Орбели), М.-Л.,1960.

3. Մամուլ

3.1. Կարապետյան Ս., Հայկական հուշարձանների վիճակը Հայաստանի հարևան երկրներում, Տես <<Վասն հայության>>, շաբաթաթերթ, 23, ապրիլ, 2002, էջ 10-13:

L.Kirakosyan

YSU

Cultural Genocide (on the examples of the monuments in Artsach)

Summary

Speaking about Armenian genocide one only remembers more than a million and a half innocent victims murdered, slaughtered, driven to ether places. Far less is thought of the cultural loss and spiritual and material values that we lost.

Todaythe Azerbaidjianians steadily and deliberately destroy Armenian cultural heritance and this process can be fully called ,,ethnocide,, or genocide.

The policy of changing chistian armenian architecture led by Azerbaidjian goverment is done in several directions.

- Nothing is said about them in official publications, guidebooks,
- ethnocultural and religious identity is changed,
- the monuments are deliberately destroyed,
- different barbaric actions are done (explosion, destroyment, usage of the stones of churches as building material, stalles, stores) against the monuments,
- reconstructing Armenian christian churches into Moslim buildings,
- hiding many Armenian monuments under thick layer of soil,
- prohibiting visits and research of the monuments,
- changing the plan, view, identity of the architectural monuments under the name ef, reconstruction and rebuilding.